

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Իրավաբանների համահայկական խորհրդաժողով» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման տեսակ է, որում, իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով միավորվել են իրավագիտություն մասնագիտություն ունեցող ֆիզիկական անձինք՝ Նայասրանի Նանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

1.2. Կազմակերպությունը գործում է Նայասրանի Նանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի, Նայասրանի Նանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, անդամության կամավորությունը, անդամների իրավահավասարությունը, ինքնակառավարումը, ղեկավարման կոլեգիալությունը և հրապարակայնությունը:

1.4. Կազմակերպությունը գործում է Նայասրանի Նանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5. Կազմակերպության պաշտոնական լեզուն հայերենն է, իսկ աշխատանքային լեզուներ են նաև անգլերենը, ռուսերենը, ֆրանսերենը: Տարբեր լեզուներով գրված տեքստերի մեկնաբանությունից ծագած որևէ անհամապատասխանության դեպքում, որոշիչ է համարվում հայերեն գրված տեքստը:

1.6. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ «Իրավաբանների համահայկական խորհրդաժողով» հասարակական կազմակերպություն

Կազմակերպության հայերեն կրճատ անվանումն է՝

«ԻՆԽ» ՆԿ

Կազմակերպության ռուսերեն լրիվ անվանումն է՝

"Всеармянская конференция юристов" общественная организация

Կազմակերպության ռուսերեն կրճատ անվանումն է՝

"ВКЮ" ОО

Կազմակերպության անգլերեն լրիվ անվանումն է՝

"Pan Armenian Conference of Lawyers" non - governmental organization

Կազմակերպության անգլերեն կրճատ անվանումն է՝

"PACL" NGO:

Կազմակերպության գրնվելու վայրն է՝ Նայասրանի Նանրապետություն, Երևան, Վ. Սարգսյան 26/1, 0010, հեռ. (010)58-81-27:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝ ՏՏ օրենսդրությամբ սահմանված կարգով՝

ա/ Նայասրանի, Արցախի և Սփյուռքի միջև իրավագիտության փարբեր բնագավառներում պետական և ազգային ծրագրերի իրականացմանն աջակցությունը, մասնագետների միջև գործակցության ակտիվացումը,

բ/ համահայկական իրավագիտական ներուժի համախմբումը և միջազգային համագործակցության միջոցով հայ իրավագիտության զարգացմանը նպաստելը:

2.2. Կազմակերպության խնդիրներն են.

ա) Նայասրանի Նանրապետությունում, Արցախում և Սփյուռքում իրավագիտության բնագավառի գիտական և սրբեղծագործական մրթի համախմբումը,

բ) իրավագիտության բնագավառում ազգային և միջազգային փորձի փոխանակումը, համահայկական նշանակության գիտական, հեղափոխական և նախագծային համարեղ գործունեության կազմակերպումը և իրականացումը,

գ) Նայասրանի Նանրապետության և Սփյուռքի ականավոր գիտնականների, մասնագետների, ազգային գործիչների գործունեության ներկայացումը Սփյուռքում, Արցախում և Նայասրանում, նրանց նվիրված ծրագրերի կազմակերպումը կամ մասնակցությունը դրանց,

դ) Նայասրանի Նանրապետության իրավական համակարգի զարգացման ռազմավարության մշակմանն աջակցելը,

ե) Նայասրանում և այլ երկրներում գրնվող հայկական պարամաշակութային արժեքների, մշակութային ժառանգության պահպանության և իրավական պաշտպանության հարցերին աջակցելը,

զ) համահայկական նշանակության իրավագիտական և իրավունքի ոլորտի առանձին ծրագրերի մշակմանը և իրականացմանն օժանդակելը,

է) երիտասարդ մասնագետների և ուսանողների կրթական, մասնագիտական գործունեության խթանումը, որակավորման բարձրացումը, մասնագիտական փորձի ձեռքբերմանը նպաստելը,

ը) համահայկական նշանակության իրավագիտական մրցույթների, գիտագործնական սեմինարների և համաժողովների կազմակերպումը,

թ) իրավագիտության բնագավառի ազգային տեղեկատվական ցանցի սրբեղծումը,

ժ) միջազգային իրավունքի մասնագետների պարասպաններ, մասնավորապես ցեղասպանագետ-իրավաբանների պարասպաններն աջակցությունը,

ի) օրենքով չարգելված այլ գործունեության իրականացումը:

2.3. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունը սահմանված կարգով համագործակցում է ՏՏ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, Նայասրանյայց առաքելական սուրբ եկեղեցու եւ օրենքով սահմանված կարգով գործող այլ կրոնական կազմակերպությունների, ՏՏ փաստաբանների պալատի, ՏՏ իրավաբանների միության, ՏՏ սահմանադրական իրավունքի կենտրոնի, ՏՏ դատավորների միության, Միջազգային իրավունքի հայկական ընկերակցության, Նայասրանում, Արցախում և Սփյուռքում գործող հասարակական, մասնավորապես՝ մասնագիտական այլ կազմակերպությունների ու անհատների, ինչպես նաև միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների հետ:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻ ՑԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ Նայասրանի Նանրապետության և օտարերկրյա ցանկացած հայ քաղաքացի, ինչպես նաև քաղաքացիություն

չունեցող անձ, ով ունի իրավագիտության ոլորտին առնչվող մասնագիտություն և ցանկանում է մասնակցել Կազմակերպության գործունեությանը և ընդունում է նրա կանոնադրությունը: Օտարերկրացի այլազգիները ևս կարող են դառնալ կազմակերպության անդամ, եթե նրանց երաշխավորում են Կազմակերպության առնվազն երկու անդամ:

3.2. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության խորհրդին (այսուհետև՝ խորհուրդ), կամ առանձնացված ստորաբաժանման ղեկավարությանը:

3.3. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է խորհուրդը կամ առանձնացված ստորաբաժանման ղեկավարությունը՝ խորհրդի կողմից հաստատված՝ Առանձնացված ստորաբաժանման կանոնադրությամբ սահմանված կարգով: Առանձնացված ստորաբաժանման ղեկավարը յուրաքանչյուր ամսվա վերջին փեղեկացնում է խորհրդին՝ անդամների կազմի և թվաքանակի վերաբերյալ, եթե դրանք փոփոխվել են:

3.4. Կազմակերպության անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից զրկումը փեղի է ունենում խորհրդի որոշմամբ:

3.5. Խորհրդի որոշմամբ կազմակերպության պատվավոր անդամ կարող են ընտրվել Նայասրանի Նանրապետության կամ օտարերկրյա այն քաղաքացիները, ովքեր առանձնապես կնպաստեն համահայկական իրավաբանական ներուժի համախմբմանը և հայ իրավագիտության զարգացմանը:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝
ա/ ընտրել Կազմակերպության բարձրագույն և այլ մարմիններ և ընտրվել դրանցում.

բ/ Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ.

գ/ սպառիչ փեղեկատվություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին.

դ/ ազատ դուրս գալ Կազմակերպությունից.

ե/ Կազմակերպությունից ստանալ օգնություն՝ ուղղված իր օրինական շահերի պաշտպանությանը.

զ/ մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին.

է/ Կազմակերպության խորհրդի եւ խորհրդի աշխատանքները համակարգող նախագահի ոչ կանոնադրական գործունեության դեմ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել ժողովին, իսկ վերջինիս կողմից արդարացի լուծում չտալու դեպքում՝ դիմել դատարան.

ը/ Կազմակերպության աշխատանքներին մասնակցել հեռավար եղանակներով:

4.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

ա/ բարձր պահել Կազմակերպության հեղինակությունը.

բ/ կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները.

զ/ մուծել մուտքի վճար և անդամավճար, որոնց չափն ու վճարման կարգը սահմանում է խորհուրդը.

դ/ բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները:

4.3. Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության ժողովի կամ խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողություն, խիստ նկատողություն, Կազմակերպության անդամությունից գրկում:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1. Կազմակերպությունն իրավաբանական անձ է պետական գրանցման պահից:

5.2. Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, իր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումով կնիք, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Նայաստանի Նանրապետության և օտարերկրյա արժույթով, իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում:

5.3. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

5.4. Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

ա/ տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին.

բ/ սահմանված կարգով հիմնադրել լրացուցիչ միջոցներ.

գ/ կազմակերպել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր.

դ/ ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

ե/ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ իր կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների միջոցով, ստեղծել հիմնադրամներ, առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ.

զ/ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, վարձակալել և օգտագործել անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք.

է/ օտարել կամ վարձակալության կամ անվճար օգտագործման հանձնել Կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք.

ը/ կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ.

թ/ ինքնուրույն կազմավորել և տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Նայաստանի Նանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով.

ժ/ իրականացնել միջազգային գործունեություն, այդ թվում՝ գործուղել փոքրեր երկրներ, հրավիրել այլ պետություններից քաղաքացիներ, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կազմակերպությունը պարտավոր է՝

ա/ ցանկացած ֆիզիկական անձի պահանջով 7 օրացուցային օրվա ընթացքում նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը.

բ/ օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.

գ/ իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության ժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու փարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը.

դ/ պետական կառավարման լիազորված մարմնի պահանջով նրան տրամադրել իր բարձրագույն և մյուս մարմինների որոշումների պատճենները, Կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմինների ներկայացուցիչներին ներկա գրնվել Կազմակերպության ժողովին.

ե/ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին.

զ/ առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և լուծարելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկամսյա ժամկետում դիմել պետական գրանցման մարմին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար.

է/ վարել իր անդամների հաշվառումը.

ը/ առանց լիազորագրի Կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և (կամ) Կազմակերպության գրնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացուցային օրվա ընթացքում պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային փվյալները և (կամ) Կազմակերպության գրնվելու վայրի հասցեի մասին փվյալները.

թ/ Կազմակերպության անդամներին տրամադրել սպառիչ տեղեկատվություն Կազմակերպության գործունեության վերաբերյալ:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:

7.2. Ժողովը հրավիրվում է երկու փարին մեկ անգամ: Ժողովը հրավիրում, դրա անցկացման կարգն ու ժամկետները որոշում է կազմակերպության խորհուրդը: Եթե Կազմակերպության անդամների թվաքանակն անցնում է հարյուրից, ապա խորհրդի կողմից սահմանված կարգով ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:

7.3. Կազմակերպության արտահերթ ժողով հրավիրվում է Կազմակերպության անդամների մեկ երրորդի կամ վերահսկիչ մարմնի պատճառաբանված պահանջով՝ խորհրդի կողմից, պահանջող կողմի հաստատված օրակարգով՝ ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում:

7.4. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

ա/ Կազմակերպության կանոնադրության ընդունումը և փոփոխումը.

բ/ Կազմակերպության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրությունը, փոփոխումը և հեղկանջը.

գ/ Կազմակերպության լուծարման և վերակազմակերպման մասին որոշումների ընդունումը.

դ/ Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը:

7.5. Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե դրան մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների կամ ընտրված բոլոր պատվիրակների կեսից ավելին: Նարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են Կազմակերպության բոլոր անդամների կամ ընտրված բոլոր պատվիրակների ձայների պարզ

մեծամասնությամբ: Կանոնադրության փոփոխությունները եւ լրացումները կատարվում են Կազմակերպության բոլոր անդամների կամ ընտրված բոլոր պատվիրակների ձայների որակյալ մեծամասնությամբ (2/3-ով):

7.6. Կազմակերպության խորհուրդն ընտրվում է Ժողովի կողմից՝ երկու փարի ժամկետով:

Յուրաքանչյուր երկիր ներկայացնող իրավաբաններն իրենք են առաջադրում խորհրդի անդամներ:

Նայաստանից կարող է ընտրվել խորհրդի մինչեւ 15 անդամ, ԱՄՆ-ից՝ 7, Ռուսաստանի Դաշնությունից՝ 7, Ֆրանսիայից՝ 6, Իրանից՝ 5, Լեռնային Ղարաբաղից՝ 3, Կանադայից՝ 2, Արգենտինայից՝ 2, Վրաստանից՝ 2, այլ երկրներից՝ մեկական անդամ:

7.7. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են խորհրդի աշխատանքներն համակարգող նախագահի կողմից՝ ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի կամ խորհրդի հինգ անդամի պահանջով: Խորհրդի նիստերը կարող են գումարվել նաև էլեկտրոնային հաղորդակցության միջոցով:

7.8. Կազմակերպությունն ունի հանձնաժողովներ, որոնց գործունեության ուղղությունները և կազմերն ընտրվում են խորհրդի կողմից:

7.9. Խորհուրդը՝

ա/ ընտրում է խորհրդի աշխատանքները համակարգող նախագահ, բացառությամբ խորհրդի աշխատանքները համակարգող առաջին նախագահի, որին ընտրում է հիմնադիր ժողովը,

բ/ հաստատում է համակարգող նախագահի հաշվետվությունները, այդ թվում՝ Ժողովին ներկայացվող հաշվետվությունը.

գ/ առաջարկություններ է ներկայացնում Ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի մասին.

դ/ ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում կամ գրկում անդամությունից.

ե/ Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և պույժի միջոցներ.

զ/ խրախուսում է ՏՏ և օտարերկրյա այն անձանց, ովքեր առանձնապես աչքի են ընկել Կազմակերպությանն աջակցող իրենց գործունեությամբ.

է/ ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը՝ ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում.

ը/ սահմանում է Կազմակերպության անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարի մուծման կարգը, չափերը և ձևերը.

թ/ ստեղծում և լուծարում է Կազմակերպության հիմնարկները, կառուցվածքային ստորաբաժանումները, առանձնացված ստորաբաժանումները /մասնաճյուղեր, ներկայացուցչություններ/, փնտեսական ընկերությունները, ինչպես նաև հաստատում է նրանց կանոնադրությունները.

ժ/ իրավունք ունի քննարկելու և լուծելու Կազմակերպության գործունեությանն ու կառավարմանն առնչվող ցանկացած հարց, բացառությամբ Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահվածներից, այդ թվում՝ նաև Կազմակերպության անդամակցության հարցը ոչ առևտրային իրավաբանական անձանց միություններին և միջազգային կազմակերպություններին.

ժա/ սահմանում է Կազմակերպության պարգևատրման կարգերը /մեդալ, պատվոգիր, շնորհակալագիր/ և այլ խրախուսանքի ձևերը,

ժբ/ հաստատում է Կազմակերպության հաշվապահական հաշվառման հաշվետվությունները՝ վերահսկիչ մարմնի եզրակացության հիման վրա:

7.10. Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում է իր անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում համակարգող նախագահի ձայնը վճռորոշ է:

7.11. Տամակարգող նախագահն ընտրվում է խորհրդի կողմից՝ խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, 2 փարի ժամկետով:

7.12. Տամակարգող նախագահը համակարգում է խորհրդի աշխատանքները.

- ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի.
- ընդունում է որոշումներ, փալիս է լիազորագրեր.
- ձեռք է բերում, փիրապետում, օգտագործում, փնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության բոլոր փեսակի և ցանկացած արժողությամբ գույքը,
- հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձավորության կարգն ու չափերը.
- անհրաժեշտության դեպքում աշխատանքների ծավալից և իր ծանրաբեռնվածությունից ելնելով կարող է նշանակել գործադիր փնօրեն, որի հետ նախագահը կնքում է աշխատանքային պայմանագիր և նրան փալիս, սույն կանոնադրությամբ սահմանված լիազորություններից բացի, լրացուցիչ լիազորություններ:

7.13. Կազմակերպության գործունեության նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողությունն իրականացվում է վերահսկիչ մարմնի կողմից, որպիսին հանդես է գալիս խորհրդում 3 եւ ավելի ներկայացուցիչ ունեցող երկրների կազմակերպության անդամներից առաջադրված մեկական ներկայացուցիչ: Վերահսկիչ մարմինը ձեւավորվում է երկու փարի ժամկետով եւ օրենքով սահմանված կարգով կատարած ուսումնասիրությունների արդյունքները յուրաքանչյուր փարի ներկայացնում է խորհրդին եւ երկու փարին մեկ՝ հաշվետվության ձեւով, կազմակերպության ժողովին:

7.14. Կազմակերպության գործադիր փնօրենը նշանակվում է երկու փարի ժամկետով:

7.15. Կազմակերպության գործադիր փնօրենը՝

- սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով իրեն փրված լիազորությունների սահմաններում կազմակերպում և իրականացնում է կազմակերպության գործունեությունը.
- օրենքով սահմանված կարգով կնքում է գործարքներ, սպորագրում պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ.
- համակարգող նախագահի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձավորության կարգն ու չափերը.
- իր լիազորությունների սահմաններում ընդունում է որոշումներ, հաստիքային և պայմանագրային աշխատողներին փալիս հանձնարարականներ.
- իր գործունեության մասին փարեկան հաշվետվություն է ներկայացնում խորհրդին, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է խորհրդի նիստերին:

7.16. Գործադիր փնօրենի հաստիքի բացակայության դեպքում կամ մինչև փնօրեն նշանակելը, կամ փնօրենին պաշտոնից ազատելուց հետո, կամ նրա երկարափուլ բացակայության դեպքում, սույն կանոնադրությամբ նրան վերապահված բոլոր լիազորություններն իրականացնում է համակարգող նախագահը կամ նրա կողմից պայմանագրային հիմունքներով ժամանակավոր ընտրված անձը:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ԳՈՅԱՅՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:

8.2. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, փրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

8.3. Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝

- Կազմակերպության անդամների մուտքի վճարները, անդամավճարները,
- դրամական և նյութական ներդրումները,
- բանկային հիմնարկներից ստացված վարկերը,
- դրամաշնորհները,
- բարեգործական ներդրումները, ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրատվությունները,
- Կազմակերպության կողմից հիմնադրված փոխառական ընկերությունների փոխանցած գումարները,
- Նայասֆանի Նանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:

8.4. Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դափարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

8.5. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

9.1. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի կամ դափարանի որոշմամբ:

9.2. Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, Ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ, եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

9.3. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դափարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: